<<ԱՊՐԵԼՈՒ ԲԱՆԱՁԵՎ>>

Գրքի շնորհանդես

Առնո Բաբաջանյան համերգասրահում նոյեմբերի 2-ին կայացավ կայացավ Հանրային ռադիոյի <<Ապրելու բանաձև>> հեղինակային հաղորդման ռադիոհաղորդավար Գոհար Մարտիկյանի <<Ապրելու բանաձև>> գեղարվեստական,պատմավավերագրական մատենաշարի 13-րդ հատորի շնորհանդեսը:

Մատենաշարը նվիրված է 20-րդ դարավերջի հաղթանակ կերտած, արցախյան առաջին պատերազմի նահատակների հիշատակին, ովքեր իրենց ամենանվիրականը՝ կյանքը, դրեցին հանուն մեր վառ ապագայի: 13-րդ հատորն արդեն նվիրված էր ապրող հերոսներին: Լեփ լեցուն դահլիճում սիրո և խոնարհման երեկո էր: Հանիսատեսին էր փոխանցվում հեղինակի ջերմությունն ու ապրեցնող ուժը: Ի րականում հերոսածին մայր Գոհար Մարտիկյանի այդ փոխանցող սիրո և ջերմության մեջ, որքան ցավ ու տառապանք է կրում յուրաքանչյուր նահատակ հերոսի մասին գրելով, յուրաքնչյուրի ընտանիքի հետ շփվելով:

Մեծ խոնարհում սիրելի տիկին Մարտիկյան: Քանի դուք և ձեր նմանները ապրում եք և ապրեցնում, հայ ժողովուրդը գոյատեվելու է և արարելու: